

բէն կ'երթան : վերելքը պժուարագնաց է . բայց որչափ կը բարձրանանք՝ այնչափ աւելի հրաշխառն և մոգական կ'ըլլայ ձորահովտին տեսարանը , տարօրինակ ձևեր ունեցող հողաքարամբք ցցուած , որոց ստորոտը կը վազեն գետոյն փրփրալից և հայելոյ պէս ցոլացիկ ջուրք՝ պայծառագեղ արեգական մը ճառագայթից տակ : Նոյն միջոցին հին աւանն Էրուտի յանդիման կ'երևի աշաց իւր բոլոր վայրենի գեղեցկութեամբ . ցաւելով վերջին ակնարկ մը կը ձգենք , ու աչքէ կը կորսնցընենք , հասնելով ընդարձակ հրաբխային սահմարթ մը , զոր թափառական Տատը արշաւաստոյր կը զրաւին :

Շարաշարեղի

ՄԵԾԻՆ ՆԵՐՍԻՍԻ ԸՆԾԱՅՈՒԱԾ

ՄԱՐԳԱՐԷԱԻԹԵԱՆ ՅՈՅՆ ԲՆԱԳԻՐՆ ԵՒ ԱՆՈՐ

ՎԵՐԱՅ ԵՂԱԾ ԿՐԿԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՔ



ՄԱՆՕԹ է բանասիրաց յամին 1853 ի վենետիկ հրատարակուած « Պատմադրիւն Սրբոյն Ներսիսի Պարբէի Հայոց հայրապետի , որ « Հայկ . Սոփերաց » Զ . հատորը կը կազմէ : Տարակոյս չկայ բնաւ , թէ Պատմագրութեան հեղինակն իրօք եղած ըլլայ Մեսրոպ Երեց՝ ի Ժ . դարու . բայց այն անծանօթ աղբերքը , զորս ի վար արկած է նա , — բաց ի փ . Բուզանդացւոյ , — ինչպէս նաև ինչ ինչ եկամուտ հատուածներ , որք հաւանօրէն յետոյ ժամանակաւ սպրդած են անդ , առանց տարակուսի չէին անցնիր քննասիրի մի տեսութենէն : Այս աղբերաց կարգէն են բոլոր այն մարգարէագուշակ բանից և տեսլեանց հատուածներն , որոնք Մեծին Ներսիսի բերանը զրուած են՝ ի քաղել հոգւոյն՝ դաւաճանող թիւնից անօրէն թագաւորին Պապայ , և որոնք 87—104 էջերու մէջ կը լիւսան : Տեղեացս անհարազատ ըլլալուն յայտնի ապացոյց են՝ աւելի օտարին՝ քան Հայոց պատմութեան և ազգին վերաբերեալ այն պատմական և աշխարհագրական ակնարկութիւններն , որք հակա-ժամանակագրական և անյարմար կերպով մոցուած են Ս . Ներսիսի առ Հայս և ի մասնաւորի առ Արշակունիս ուղղեալ խօսից և գուշակութեանց հետ , և աչքի դարձող կերպով կարծես թէ ընդհատած են զանոնք իրարմէ :

Վերջերս իմ սիրելի բարեկամ գրչագրերէն մին , այն է « Ի . Սկեփոթիկն »¹

1 . Գրչագիրս կը պատկանէր ժամանակաւ Տէր Կարապետի Խզլարցւոյ . զոր ընծայեց Հ . Մինաս վարդապետին մերոց Բժշկեան : Առաջին մասն , — յորում կը պարունակի յիշեալ գրութիւնն՝ Ագաթրոնի գուշակութեան հետ , — է նոսրա-

աչքէ անցուցած ժամանակ, հանդիպեցայ 78 երես հետաքրքրական գրութեան մի, որոյ ճակատին վրայ կարմրադեղիւ այսպէս գրուած է. « Սուրբ հօրն մերոյ Մերօտիոռ Պատրոշնիոռ եպիսկոպոսի՝ ի Մեկնութենէ Դանիէլի մարգարէին, զոր արար ի յետ քանից իւրոց ի մեկնութենէ տեսեանն չորից հողմոցն և չորից գագանացն. ստոյգ պատմութիւն չորից ինքնակալ քաղաքացն, և վասն տիրելոյ հերանոսացն և յետին ժամանակին, և նեղութեանց՝ որ լինելոց է. և վասն քաղաքացն որ փոխադրեցան, և վասն գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ » :

Այս վերնագիրս արդէն մէջ բերուած է ի վանս հրատարակուած « Մատենադարան հայկական քարգմանութեանց նախնեացի մէջ, —յէջ 563—564, — առանց յիշատակութեան գրչագրին, յորում սակայն մակագրէն յետոյ . « Բորժամ Ազամ և Եւս երեւոյ ի դրախտէն՝ կոյսք զոյով », և այլն, սկզբնաւորող բառերէն կը տեսնուի, թէ 1889ին Հայկական թարգմանութեանց Մատենադարանին հեղինակի գործածածը մի ուրիշ գրչագիր ըլլալու է, զի մեր յիշածին մէջ, ընհակառակն, « Մինչ ելին ի դրախտէն Ազամ և Եւս կոյսք էին » բառերով կը սկսի, և շարաքանութեամբ իսկ կը տարբերի յառաջնոյ անտի: Այս երկու գրչագրաց տարբերութեան և անոնց պատճառաց վրայ վերջէն առիթ պիտի ունենանք խօսել. այժմ այսչափ ըսենք, որ Մատենադարանին մէջ ունինք այժմ երկու գրչագրեր, և երկոքեան իսկ գրեթէ անթերի կերպով կը ներկայացնեն մեզ ամենաուշագրաւ գրութիւն մի, — որ հարազատ կամ անհարազատ, — ծանօթ էր նոյնպէս Ստեփ. Օրբելեանին և Մեարթը ¹ Երիցուն: Սիւնեաց պատմագիրն՝ իր նշանաւոր գործոյն՝ Ա. հատորին մէջ պ. ԼԲ. նման՝ բայց համառօտ խորագիր մ'իւս կը բերէ այսպէս. « Տեսիլ Սրբոյն Մերօտի եպիսկոպոսին Պատարայ և վկայի յաղագս անցելոյն, ներկայիս և ապագանացն, ասացուածք յԱստուածաշնչն զրոց », և այլն, որով վերոյիշեալ գրչագրերէն աւելի հնագոյն աղբիւր մ'իւս կ'ունենանք յանուն Մեթողիոսի ընծայուած գրութեան ի նպաստ: Ուրեմն աստ կարեւոր հարցմունքներ կ'ելլեն մեզ ընդ առաջ, և մեր պարսիմք ըստ կարելւոյն ջանալ լուծել զայնս համառօտիւ: Ա. թէ ո՞վ է այս Մեթողիոս, որուն ընծայուած է այն գրութիւն: Բ. կարելի՞ է արդեօք անոր հարազատ քործ համարել զայն, եթէ ոչ: Գ. Հայերէնն՝ յունարէնէ եղած պարզ թարգմանութիւն մ'է միայն, թէ ընդ հակառակն եղած են այլևայլ ժամանակ

գիր նոր, Թղթեայ, Յակոբ Ղլրիմեցիէն վերջ գրուած է, զի կը յիշուի նա իւր մէկ ճառովը. իսկ միւս մասը, — որ Ս. Ներսիսի պատասխանական թղթով մի կը սկսի առ Յակոբ վարդապետ Մելիքոյ, — Ժե դարուն գրուած կ'երևի, առ նուազն: Այսով գրչագիրն 290 միասին երեսներէ բաղկացած է:

1. Մեծին Ներսիսի կենսագիրն՝ Իսմայէլեան ազգին, Հռոմոց զօրանալուն, խալի գերութեան և ազատութեան, Նեոխն և վերջի դատաստանի հատուածները միայն անկէ քաղած է, ինչպէս յետոյ պիտի տեսնենք:

2. Տպգ. Շահնազարեանցի. ի Պարիս 1889:

նակաց մէջ իրարմէ տարբեր խմբազրութիւններ: Դ. Թէ Մեծին Ներսիսի և Սիւնեայ Պատմագրութեան հեղինակներն ի՞նչ աղերս ունին հայ Թարգմանութեան, կամ, ընդհակառակն, յոյն բնագրի հետ, և ի՞նչպէս վարուած են:

Առաջին հարցման պատասխանին՝ ըստ իմիջ տուած են արդէն երկասիրութեանս բոլոր հայ և լատին գրագիրք, այսինքն է՝ կոչելով զՄերողիոս՝ եպիսկոպոս Պատարայ քաղաքին: Այո՛, մեծիմաստ և կորովամիտ մատենագիրս այս, որ Ե. զարէն և այսր ծանօթ է նաև մեր դասական մատենագրաց, և կարծուածէն աւելի նիւթեր մատակարարած, մականուանուած է նաև Էջմուչիոս: Յաջորդաբար այլևայլ տեղեաց եպիսկոպոսութիւնը վարած է, նախ Ոլլիմպիոյ, ապա Պատարայ և հուսկ ուրեմն Տիւրոսի: Ժամանակակցաց մէջ ամենէն աւելի ջերմ պաշտպան հանդիսացաւ նա ուղղափառ դասանութեան, իւր անսովոր զիտութեամբ և կորովով: Արիանոսաց յուզման ժամանակ նա ինքն ևս իբրև անպարտելի արդեան նոցին՝ արքայութեամբ կարծուի ի Քաղկիս Ասորաց. բայց իբրց յամին 312 Դիոկղետիանոսի հալածանաց միջոց՝ լկայեցաւ ի Քրիստոս և դասեցաւ ի թիւս սրբոց ասօնելեաց: Բազմաթիւ ջատագովական, ճառական և մեկնողական գրուածներն ընծայուած են սուրբ Հօրս, յորոց ոմանք, օրինակի աղագաւ, Յաղագս անձնիշխանոքն և ծագման լարին, ընդդէմ՝ Վաղենտինեանց, — Յաղագս կոռուքեան, — Վասն արարածոց և Ընդդէմ Պորփիրի, — որ իսպառ անյայտացած է, — առանց երկբայութեան հարազատ ճանչցուած են և հրատարակուած Գալլանդեայ, Մինիի և այլոց ձեռքով, ի Մատենադարանի յոյն և լատին Հարց:

Գալով երկրորդ հարցին՝ պէտք է բնել, թէ չկան ոչ արտաքին և ոչ ներքին հաստատուն կուտաններ, որով կարելի լինէր վերոյիշեալ Յայտնաբերել Մեթոդիոսի հարազատ քործ համարել, այժմեան ձևին մէջ. մանաւանդ իւր ժամանակակիցներէն օկսեալ մինչև հմուտ փոս՝ այնպիսի գրութեան մի մասին պահած խոր լուծութիւնը մէկ կողմէն, միւս կողմէն ևս գրուածքին անհարթ ոճը՝ անհարազատ կը ցուցնեն զայն, և ոչ վայել այնպիսի ծանրատոհմ և ուղղամիտ մատենագրի մի: Այս պատճառաւ իսկ Էյմբեֆիս և Գալլանդի զանց ըրին հրատարակել ի շարս գործոց Մեթոդիոսի, թէպէտև զրականապէս ալ հերքած չեն: Իսկ այլք, ընդհակառակն իբրև հարազատ՝ անկասկած հրատարակեցին զայն, նոյն իսկ սպագրութեան արուեստի նախկին երախայրեաց մէջ՝ ի հերուն հետէ: Այսպիսի են Ուրիկ Յէլլի հրատարակութիւնը՝ մօտ յամն 1475, ի Կոլոնիա, զոյգ ընդ Յայտնութեանց Ս. Բոնապլենտուայի, Յովհ. Փրոշաւէրի հրատարակութիւնն՝ 1496ին, յԱլգորթ, — Բազէլի հրատարակութիւնը՝ յամն 1498, 1504 և 1516. — Գուստոն Մերկատորի հրատարակութիւնն ի Պարիս, յամին 1498, և Լուգոնի հրատարակութիւնն յամին 1677: Բոլոր այս հրատարակութեանց, — բաց ի Բազէլի 1516 հրատարակութենէն, — մեզ ներկայացուցածը լատին Թարգմա-

1. S. Nirschl, Patrol. I, S. 350:

նութեամբ է։ Վիեննայի մատենադարանի մէկ ձեռագիրն և ուրիշ մ'ալ Գոտտինգերի կը ներկայացնեն յունարէնը՝ հայերէնի նման՝ բայց կտրաւորաւ խորագրով մի։ Մինչի հրատարակութիւնը չգիտեմ, թէ ո՞ր ձեռագրի վրայէն եղած է, զի յունէի զայն ի ձեռին։ Իմ գործածածս է Լուզզոնի հրատարակութիւնը, որ ընդհանրապէս հայերէնին համաձայն կ'ընթանայ, բաց ի սկզբաւորութեանէն, վերջաւորութեանէն և ուրիշ մի քանի տեղերէ, զորս յետոյ պիտի նշանակենք։

Արդ՝ ես որչափ որ առաջնոց կարծեաց աւելի համախոհ եմ, ի նկատի առնելով Մեթոդիոսի յայտնութեանց այժմեան ձևակերպութիւնը, սակայն ինձ պարտք կը համարիմ յիշել աստ և մի քանի պարագայներ, որք կը թուին հաւատարմացունել, թէ այդ գրութեան գէթ մի մասն՝ Ս. Մեթոդիոսի, և գուցէ թէ անկէ աւելի հին յաղբերաց քաղուած ըլլայ, որուն վրայ յետոյ իբրև ի հիման յօրինուած են ուրիշ յոյն և լատին, ինչպէս և հայերէն խմբագրութիւններ։ Ա. Ամենահաւանական է, որ Մեթոդիոս՝ ինչպէս ուրիշ եկեղեցական Հարք, զրած ըլլայ նաև հին և նոր կտակարանաց մեկնութիւններ, որոցմէ ինչ ինչ հատուածներ մէջ կը բերէ փոքր, առանց երկբայելու անոնց հարազատութեան վրայ. ուրեմն շատ հաւանական է որ նա ինքն Գանիէլի և ուրիշ գրոց մեկնութիւններ ևս յօրինած ըլլար, ընդդէմ աղեքսանդրեան պարոցի հեթանոս և հերետիկոս իմաստոց և իմաստականերու, օգտուելով անոնց հնագոյն գործերէն, որոնք Քրիստոսի թուականի առաջին դարէն սկսեալ հնարուեցան՝ քրիստոնէից կրօնքը և Ս. Գիրքը ծաղրելու համար, և կամ մոլորութիւններ սերմանելու նպատակաւ։ Այս կարգէն համարելու ենք Աղամայ կտակը կամ Տեսիլն, Ենովքայ պատմութիւնը, Մարգարէից մահերն¹, որ կը գտնուին Աստուածաշնչին հնագոյն գրքազարաց մէջ, — որոնց իբրև մնացորդ համարելու ենք չորից հողմոց և ինքնակալութեանց հատուածներն, որք կազմած են մեթոդիոսեան Յայտնութեան էական մասը։

Այս մասին յոյժ շնորհապարտ եմք Միքայէլի Ասորոյ, որ թէպէտև առանց ստուգաբանութեան մէջ կը բերէ այս և ուրիշ հնագոյն աղբիւրներ, բայց գովելի սովորութեամբ կը յիշէ առնթներ հատուածոց՝ նաև անոնց հեղինակաց անուանքը, զոյդ ընդ Մեթոդիոսի, իւր Ժամանակագրութեան հրմտական գործին մէջ, զոր Վիկ. Լանգլուա ճոյժ ծանօթութեամբք աւելի ևս լուսաբանած է։ Արդ՝ աչքէ անցնելով Ասորոյն Ժամանակագրութիւնը, 21 էջէն և անոր՝ կը տեսնենք, որ Աղամայ Տեսիլքն, Ենովքայ գրքէն և Անիոսէն մէջ բերած տեղիքը, — Աղամայ, Ենովքայ և ուրիշ նահապետաց

1. Մեթոդիոսի տեսչեան հայերէն թարգմանութեան մէջ, յէջ 67, ուր կ'ըսուի վասն Նեոնի, թէ « Եւտ այսորիկ ելանէ ի լեռնն Ձիթենեաց և զտանէ զտապանակն Տեառն, զոր Երեմիայ մարգարէն պահեաց », և այլն, կամ ուղղակի փոխառութիւն է Մամ Երեմիայի հնագոյն գրութենէն, և կամ զայն կարգադրէ։

մատին, — քաջ կը համաձայնին յանուն Մեթոդիոսի մէջ բերուած տեղե-
րուն, բայց ի ինչ ինչ ժամանակագրական տարբերութիւններէ, զորս յոյն
հեղինակն իւր յայտնութեանց մէջ թերևս ճշգրելու և Ս. Գրոց մեքսեցնելու
համար ուզած ըլլայ բարեփոխել: Օրինակ իմն յէջ 21-22, Մեթոդիոսի
յայտնութեան այս տեղին, — որ կը գտնուի բառ առ բառ հայերէնի 1-2 ինքով.
« Madidim (Methodius) de Patara ajoute qu'Adam, 30 ans a-
près sa sortie du Paradis Terrestre, engendra Caïn avec Gui-
lima (Clima) sa seur, qu'après un pareil laps de temps, il en-
gendra Abél avec Abéla (Lábara) sa soeur, qu'Abél fut tué
130 ans après, et qu'enfin Adam engendra Seth, dans la 230
année de sa vie » ect. Նոյնը կը գտնենք Ադամայ կտակին մէջ, զոր
հրատարակեց Ռէնան, յամին 1853, Journal Asiatique-ի մէջ: Ս. Ի-
րենէոս և Եպիփան իսկ կը յիշատակեն այս տեղին, ընծայելով զայն ծաղ-
րածութեան Գնոստիկեանց և Սէթեանց: Տես Fabricius, Cod. Pseu-
doepigr Vet. Test. t. I, p. 125 et 128: Արդ՝ ասկէ կը տեսնուի, թէ
Մեթոդիոսի յայտնութիւնը կարծուածէն աւելի հին աղբիւրներէ կազմեալ է:

Երբեք, այս բանս խիստ յայտնի կերպով պիտի տեսնուի, եթէ ականարկ
մի ձգենք Մեթոդիոսի ընծայուած Տեսլեան ներքին բովանդակութեան վրայ-
դի 1 իջէն մինչև 7-երորդը ստուգել արարածոց կամ լաւ ևս իրենցոց հին
և անվերական մեկնութենէ մի առնուած կ'երևին զէպք և անուանք. իսկ
7 իջէն և անոր 'Խանիէլի մեկնութենէ մի: Բ. Ս. Հերոնիմոս իսկ յիշե-
լով Ս. Մեթոդիոսի մարտիրոսութիւնը, կը ծանուցանէ, թէ « հմուտ լի-
նելով այրն յամենայնի, շատ զբաւածներ ըրաւ, բայց ի մասնաւորի վասն
աշխարհագրածութեան, որք յայտնեցան նմա մինչ երև ի բանդի »:

Ուրեմն այս ստոյգ եղելութիւններէն կարելի է եզրակացնել, թէ յանուն
նախնեոյն Մեթոդիոսի մեզ հասած Յայտնութիւնը՝ մարգարէութիւն չէ տի-
րապէս, այլ մասամբ հին կտակարանի մեկնութեանց և հին ազգաց ժամա-
նակագրութեանց, մասամբ Արաբացոց արշաւանքէն և տիրապետութենէն,
մասամբ ալ ինչպէրաց ժամանակ և նոստանդնուպոլսի առնուելէն վերջ հան-
դիպած կրօնական և քաղաքական յեղափոխութեանց պատմական յոռաշ-
բերութիւնք են, զորս յետագայ Մեթոդիոս 1 ոմն այլաբանութենէն ընդլայնեց,

1. Այս անուամբ նշանաւոր անձինք կը յիշուին ի պատմութեան, հանրաժա-
նօթ իրենց զրուածովք և գործերով. այսինքն է Մերոդիոս Սիրակուսացի և յե-
տոյ Պատրիարք Կ. Պոլսի, որ իր ծննդեան քաղաքը իւր ուսմանց ընթացքը կա-
տարելէն վերջ՝ քահանայ ձեռնադրուեցաւ և զրկուեցաւ ի Հռովմա պապն՝ յոր-
դորելու զնա ի պաշտպանութիւն Պատրիարքին Նիկիոյի, ընդդէմ 1էոն կայ-
սեր: Ի Կ. Պոլսի վերադառնալով՝ արկաւ ի բանտ հրամանաւ պատկերամարտ կայ-
սերն Միքայելի: Յամին 843 ժողովք մ'ուս զուամարելով, շինեց զկործանեալսն ի
պատկերամարտից. և հուսկ յամին 846 կնքելով իւր մահկանացուն, Թադուց զկնի
իւր այլևայլ զրուածներ:

ունելով իւր խմբագրութեան իբրեւ հիմնադրար՝ հինաւորաց Մեթոդիոսի կամ վերոյիշեալ անվաներական գործերէն փնտրած հատակոտորները :

Իսկ այն խնդիրը, թէ յետագայ Մեթոդիոսներէն ո՞րն արդեօք կրնար եղած ըլլալ հեղինակ այդ խմբագրութեան, դժուարին է՝ գէթ առ այժմ՝ որոշել : Ես պիտի օտորժէի Սլաւաց առաքելոյն ընծայել այդ գերը, որ նոյնպէս քաջ նկարիչ ըլլալով, կ'աւանդուի թէ Բուլղարաց թագաւորին Բու-գորի համար « Վէրչիմ դաստաստանը » նկարեց, Նիկոպոլսի մէջ, այնքան կենդանի և ահաւոր, որով դարձոյց զթագաւորն և զազգը զլիսովին ի քրիս-տոնէութիւն, և քաջ կը համաձայնի այն նկարագրին, զոր այսօր կ'ընթեռ-նունք մեթոդիոսեան յայանութեան վերջին էջերում. սակայն Թ. դարէն շատ վերջ հանդիպած իրաց և անուանց յիշատակութիւնք՝ կարծես թէ աւելի ԺԳ. դարու պատրիարքը մեզ ցոյց կու տան, որ կրնար դիւրաւ Պատարայի փո-խուիլ, անզրպէտ ընդօրինակողաց ձեռքով : Փաբրիկիոս (Bibl. Gr. T. V. p. 258) առանց երկբայութեան կը համարի զայս, ապացոյց բերելով Հոտ-տինգերի՝ ձեռագիրը, յորում է. Պոլսոյ Պատրիարք Մեթոդիոս Բին վե-րագրուած է այն գրուածքը : Այս կարծեացու եղծիչ զուցէ համարուին ԺԲ. դարէն սկսեալ մինչեւ Ը. դար ծաղկող մատենագրաց ստուար խումբ մի, — ինչպիսի են Միքայէլ Ասորի, Ստեփ. Օրբէլեան, Աբուլֆարաճ, Տրիթե-միոս, Մարիանոս Սկոտոս, Էւտիքիոս, Լէոն Ալլատիոս, Մեսրոբ Էրէց և Ստեփ. Սիւնեցին, որոնք դարերով յառաջ արդէն կը ճանչնային Պատարայ եպիսկոպոսի այն Տեսիլն, և անկէ թարգմանաբար քաղուածներ ևս ըրին ի-րենց երկասիրութեանց մէջ, զորս բառ առ բառ նոյն կը գտնենք այսօր : Այս դժուարութիւնս կը վերնայ այնու մանաւանդ, եթէ դիտենք որ սոցա գործերը չեն պարունակեր իտալերաց վերաբերեալ մասերը, զորս կը գրա-նենք հայերէն ընդարձակ խմբագրութեան, այն է ի. Ոսկեփորիկիմ մէջ, այլ Պարսից, Աբարաւուց և Հերակլ կայսեր արշաւանաց մասին, և այլն :

Մերոդիոս միաձն թեսաղոնիկեցի և յետոյ առաքեալ Բուլղարաց, որուն վարքն և գործք արդէն ծանօթ են ամենուն. Յամին 855 ի Կոստանդինուպոլիս կը զըս-նուէր, երբ Բուլղարաց թագաւորը կոչեց զնա ի Նիկոպոլիս — շուսկ ապա Մե-րոդիոս (Բ) նոյնպէս պատրիարք է. Պոլսի, որ յետ Գերմանոսի, յամին 1240, վարեց համառօտիւ զպատրիարքութիւն է. Պոլսոյ, այն է 3 տարի : Փաբրիկիոս Bibl. Gr. Vol. V. p. 259-261, ուրիշ Մեթոդիոսներ ևս կը յիշէ :

1. Վիեննայի և Հոտտինգերի ձեռագրաց մակագրութիւնները, զորս ի մէջ բերէ, առանձին, Փաբրիկիոս (Bibl. Gr. T. V. p. 258) ի միասին կը կազմեն հա-յերէն թարգմանութեանս մակագրութիւնը : Ահաւարկ անոնց ընդօրինակութիւ-նը. Cod. Vindobon. Τοῦ ἐν Ἀγίοις Πατρὸς ἡμῶν Μεθοδίου ἐπισκόπου Πατάρων καὶ Μάρτυ-ρον περὶ τῶν Σαρακηνῶν, Ρωμαίων παρατάσεως καὶ ἡγῆς τοῦ Θ. , βοηθείας καὶ ἀντιλήψεως καὶ περὶ τῆς παντελοῦς ἐκτόξεως καὶ ἀφανισμοῦ τῶν Σαρακηνῶν, καὶ περὶ τῆς τοῦ κόσ-μου συντελείας. Cod. Hottinger. Χρονικὸν βασιλέων τῶν ἀπὸ συστάσεως κόσμου τὰς τοῦ κράτους ἡγίας διοικήσαντων, ὅπως τε ἔκαστων τούτων διήγη, καὶ μέχρι πούου ο ἡγῆς ζωῆς αὐτῶν χρόνων διήρχεσθ, καὶ ἐν ποίῳ τέλει τὸν βίον ἡμείψαντο.

Բրոսէ ¹ կ'աւանդէ, թէ Կ. Պոլսոյ առմանէն վերջ պլեյալ մարգարէութիւնք, — յորոց մին նա ինքն թարգմանած է ի վրացերէն գրագրէ մի, — կը շրջէին յԱրեւելս ² տիրող ազգին վտարման վրայօք՝ մոյզահեր ազգի մի ձեռքով և յետ 400 ամաց. և թէ յամին 1853 կը սպասուէր այնմ իբրև կատարուալ անվրէպ մարգարէութեան: Բրոսէի այն թարգմանութիւնը աչքի առջև չունէի, վճիռ մի տալու համար. սակայն կարող եմ ըսել, թէ յիշեալ մարգարէական գրութեանը թէպէտև Կ. Պոլսոյ առման մեծ դէպքէն վերջ գրուած են, սակայն իրենցմէ աւելի հնազոյն և գրաւոր աւանդութեան մի վրայ հիմնուած ըլլալու են, այսինքն է՝ առ նուազն յԺԳ: զառու գրուածքի մի, երբ Թուրքերն միջագետաց և Հայաստանի տիրելէն վերջ, արեւմտեան կայսրութիւնն ևս գրաւել կը սպառնային: Այժմ՝ զառանանք երբորդ խնդրոյն:

Մեր ձեռագիրներէն միոյն, — այն է Բ. Մանգակունդ Գ. օրինակին, — մէջ յէջ 534, — Թովհ. Ոսկերեանի ընծայուած և լեց թերթերէ բաղկացած ճառ մի կայ՝ հետեւեալ խորագրով. « Նորիւն Յովհ. Ոսկերեանի աւանցեալ վասն Նեախն », որուն մէջ ամբողջական հատուածներ բառ առ բառ նոյն են Մեսրոպ Երիցու և Ի. Ոսկերիկի համապատասխանող հատուածոց հետ. բայց անհարգատ կ'երևի, զի հայերէն թարգմանութիւն իսկ նոր է:

Լատիններէն բնագրով (իմա թարգմանութեամբ) կարելի եղած չէր մինչև ցայսօր՝ վճռական կերպով ապացուցանել յունարէն կամ ասորերէն մի այլ բնագրի գոյութիւնը, զի անոր մէջ բերուած անուանք այնպէս աղաւաղուած են, որ յունարէնին չեն համաձայնիր. սակայն շնորհիւ Ստեփ. Օրբէլեանի և Ի. Ոսկերիկի՝ առանց երկբայութեան կը հաստատուի այն: Առաջինն՝ իւր պատմագրութեան Ա. գրոց ԼԲ. գլխում « Տեսիլ Սրբոյն Միթոյի », և այլն, մակագրելով, անդէն կը յարէ ի նոյն. « զոր քարգմանեալ է Տեսան Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի »: Արդ՝ սուրբ հայրապետ ապրեցաւ և կոչեց, — ողբերգական մահուամբ, — իւր կեանքը Է. դարու առաջին կիսում, այն է. 735 ամին. այսպէս ապա չկարէր նա ոչ Լատինաց հետ վերաբերութիւն ունենալ և ոչ իսկ ի Լատինէ յեզով զայն ի հայ. ուրեմն պէտք է, որ անոր թարգմանած բնագիրն՝ կամ ասորերէն ըլլար և կամ յունարէն: Իսկ երկրորդն՝ իր ի վեր անոր մէջ բերած մակագրի այլաձև հոլովմամբն իսկ « Միթոյի, Պատրուհիո » յայտնապէս կը ցուցնէ, թէ ստուգիւ նա յոյն կամ ասորի բնագրէ թարգմանած և տառադարձուցած է զայն:

1. Hist. de la Siouni. p. 95.

2. Տեա Hist. de Bas-empire, Vol. XXI, p. 330. — Միւս ևս Մոսկուայի Bull. hist-Philolo. T. II. p. 238:

Շարայարելի

Հ. Բ. Ս.